

ծողութիւններ ըլլալ, և Հոգին շարանա-
կութեան պատճառաւ անոնց գիտակցու-
թիւնը չունենայ:

Կենսականութիւնն այնպիսի անյաղթիւի
գժուարութիւններ ունի որ Պուշիէ և Պու-
չիւ չկրօնաւ լուծել: Կախ՝ եթէ գործարա-
նաց մէջ նախագոյն է կենսական սկիզբը,
եթէ ինքը գանոնք կարգի կը դնէ և այնպէս
կը տիրապետէ անոնց վրայ որ ինչուան
խարխուլ գործարաններով զգործ կը տես-
նայ, ինչո՛ւ միշտ չյաջողիք ընելու նոյնը:
Ինչո՞ւ ուրեմն 'ի բազում դէպ' գործարա-
նաց կը հպատակի. ուսկի՛ց են այս խոռ-
վութիւնները: Ինչպէս այս գործինքը կ'ա-
պրատարբին իրեն դէմ և ինքը տէր չէ իր
տանը:

Երկրորդ կենսակերք կը պատճառաբա-
նեն թէ ինչ որ 'ի բաղադրիչ մասանց չէ՝
պէտք է որ դուրսէն զայ խառնուի ամբողջ
բաղադրութեան մէջ: Ասկան նոյն իսկ
անգործարան այնարհի մէջ ստեղ այնպի-
սի գանազան յատկութիւններ կ'երեւան
բաղադրութեանց մէջ, որ բոլորովին ան-
ման են բաղադրիչ մասանց յատկութեանց:
Անկենդան կազմանդոյն է ինչպէս թթուա-
ծինը. իսկ եթէ երկրորդ բաղադրիչը մէկ
տեղ, գեղեցիկ չի կարարմիր գունով հեղուկ
մը կ'ունենանք: Անկենդան կազը որոտումն
չի պատճառեր. բայց անոր մանուկը (jodu-
re) ամենէն ահաւոր որոտում հանող բա-
ղադրութիւնն է: Քանի մը մարմինք ինքնին
անկնաս գոյացութիւններ են, իսկ եթէ բա-
ղադրութիւն՝ ստակալի թոյներ կ'ըլլան:

Ուրեմն խօսքերնիս համեմատելով ըսենք
թէ Պուչիւ կը զանազանէ կանքը 'ի գոր-
ծարանաց և 'ի Հոգւոյ. իսկ Պուշիէ խոհուն
էակին և կենսական սկզբան մի և նոյն իր
ըլլալը Հաստատէ, ինչուան հինա իմաս-
տասիրաց մէջ Հոգեկանութիւնն կարծիք
մ'էր. Պուշիէ աստիճանաւ բարձրացոյց 'ի
ստուգութիւն: Տեսանք որ կենաց զգացու-
մը ներթիւն չօջախի մ'է և հաճութեան կամ
սեփածութեան զգացումն որ Հոգւոյն մէջ կը
համապատասխանեն կենաց երեւութից,
առանց անոնց լուսաորութիւն մը տալու:
ուրեմն աստուածարանից հետ կրնանք ը-
սել թէ Հոգին է կենաց պատճառը, և ի-
մաստասիրաց հետ թէ Հոգին այն երևու-
թից գիտակցութիւնը չունի. որովհետև ի-
րեն ուրիշ գործոց շատերուն գիտակցու-
թիւնէն զուրկ է, մանաւանդ անոնց որ շա-
րունակալ են. և թէ առանց հարկի և
պատճառի պէտք չէ նոր արարածներ ստեղ-
ծել և պատճառներ շատցնել:

Մեր ճշմարտորեան. — Մեր առաջին ու
զլլաւոր պարտքն է սիրել զճշմարտու-
թիւն: Ընթարտութիւնն Աստուած է. ուստի
սիրել զԱստուած, սիրել և զճշմարտու-
թիւն մի և նոյն բանն է: Չանա խնդրել
զճշմարտութիւն յամենայնի, և մի խա-
բուիք 'ի սուտ ճտումաբանութենէ այնու-
ցիկ, որ կը ջանան ընդ երկբայութեամբ
արկանել զամենայն:

Մտաւոր կարողութիւնն և հանճարն առ
ոչինչ են պիտանացու, մանաւանդ վնասա-
կար իսկ են եթէ ճշմարտութեան դէմ
պատերազմելու գործածուին առ 'ի սուտ
հանել զայն և առ 'ի պաշտպան կայ անտե-
ղի ենթադրութեանց: Վնասակար են դար-
ձեալ եթէ մերժեն զկեանս լինել բարի ինչ:
և կամ տեսնելով տիեզերաց մէջ մէկ բանի
անկարգութիւններ՝ չուզենան խոտտովա-
նիլ աստուածադիր կարգ մը. չճանչնան ես
մը բոլորովին Հոգեկան և անմահկանացու.
և կամ մոլութեան ու աւարիտութեան մէջ
եղած խտրին երազ Համարին, ու չուզենան
եռեսնալ 'ի մարդն աստուածային իմն, այլ
զամենայն անբանական վարկանին:

Եթէ մարդն ու բնութիւնն անարգ ինչ են
և արհամարհ, հապա ինչո՞ւ այսպիսիք ժա-
մակորոյս լինին յիմաստասիրել: Ուրիշ
բան չի մնար բայց եթէ անձնասպան լինել-
վանց զի բանավարութիւնն ուրիշ բան չի
կրնար թելադրել այդպիսեաց:

Քանի որ խզճմտանք կ'ըսէ ամենուն
ապրիլ, և բանի որ կ'ապրիմը ջանալով
հասանել բարոյն և կը զգամք որ մարդոյն
բարին ոչ թէ խոնարհելն է և ընդ մի հա-
մարել գանձն ընդ ճճեաց, այլ աղտուակա-
նայ և ու բարձրանալ առ Աստուած, յայտ-
նի կը հետեւցնեմք որ այն է ողջամիտ վար-
դապետութիւն որ տայ մարդոյ բարձրա-
գոյն վստճան ու նպատակ:

Ասիկա գիտնալէն վերջը՝ արիութեամբ
'ի բաց մերժեմք զսկստականութիւն և
զընսականութիւն և ամեն գմարգ նուա-
տացնող իմաստասիրութիւնները, հաւա-
տալով ճշմարտին, գեղեցիկին և բարոյն
Հաւատալու համար պէտք է կամել հաւա-
տալ ու սիրել մեծամասն զճշմարտութիւն:
Միայն այս սէրն է որ կրնայ զօրացնել
զՀոգին. և ով որ կ'ախորժի գանդաշէլ յերկ-
բայութիւնս՝ կը ըլլատէ զՀոգին:

Բոլոր ուրիշ ուղիղ սկզբանց վրայ ա-
ւելցուր և զճշմարտութիւն յամենայն 'ի
խօսս քո և 'ի գործս: Մարգկային խղճը-

տանքն 'ի ճշմարտութեան միայն կրնայ գտնուիլ իր անդորրութիւնը: Դա որ կը ստէ, թէ պէտք չ'ունի միայ ստուգութիւն, ունի պատիժն յինքն ինքեան, վասն զի խղճմբտանաց խայթն կ'ազդէ իրեն թէ իր մէկ նուիրական պարտուցը դէմ գործնց:

Ստախօսելոյ վաս ունակութիւնէ զգուշանալու համար ուրիշ միջոց չկայ, բայց եթէ գնել 'ի մտի շարտել երկէք: Եթէ գարտուղութիւն մ'ընենք այս առաջադրութեան մէջ, չկայ նոյն գարտուղութիւնը երկու, յիսուն և բիւրաւոր անգամ շքնելու պատճառ: Եւ անէս այս է պատճառն որ շատերն հակառակ կ'ըլլան ոտն առ ոտն 'ի ստել, 'ի զրպարտել և 'ի բամբասել:

Ստելոյ աւելի կամ նուազ յաճախութիւնը ժամանակին աւելի կամ նուազ ապականութեան նշանն է: Արով ընդհանուր անվստահութիւն մը կը տիրէ բոլոր ընկերութեան մէջ, անվստահութիւն մինչև 'ի մէջ հօր և որդւոյն: Անոնք որ չունին սրտի պարզութիւն, միշտ կրկին կ'ամարին այսպիսիք: Եթէ իրենց անխորթ անձ մը բան մը խօսի, կը կարծեն թէ բոլոր շարդիտամբ է. և եթէ աղօթէ կամ ողորմութիւն ընէ, փառք կու տան Աստուծոյ որ չեն իրել գնա կեցածոր:

Դու թէպէտ և այնպիսի ժամանակ ծներես 'յորում ստեղն և խաբէն սովորական բաներ գարձած են, բայց ջանա անարատ պահել զքեզ այդ ախտերէն: Միշտ պատրաստ եղիր հաւատարմ ուրիշներուն ճշմարտութեանցը, և եթէ այլք չհաւատան քոյոցդ, մի տժգոհար. բաւական է որ քու կրննեիրդ յայտնի ըլլան առաջի աչաց Սնորիկ' որ վամենայն տեսանէ:

Թիրեակիկս. — Երբ իրիկունը գրասեղանին առջին ճրագս վառած կը գրէի, ահա զիւնբային թիթեռնիկ մը սենեկիս պատուհանը բաց գտնելով ներս մտաւ, և գնաց պատին վարնուեցաւ և վար ինկաւ: Անշուշտ խեղճ արարածն մնաստուեցաւ, կ'ըսէի մտքէս, վասն զի գիտնոյն մրայ կը տապալարկէր և ողորմ ձայներ կը հանէր ջանալով 'ի վեր ելլել:

Իր ողորմ ձայներն մտածմունքներս առ ինք գարձուցին: Կը մտածէի որ եթէ յուլոգի 'ի վեր ելլել, ըստ իր սովորութեանք անշուշտ դէպ 'ի ճրագը պիտի գիմէր և թեևրը այրելով պիտի մեռնէր. ուստի գթալով խեղճիկ մրայ' ուղեցի բարեբարութիւն մ'ընել թողով գնա յազատութիւնս: Ոտք ելայ և թղթէ շինած եղջիրածև կնգըղով մը ետևէն կ'երթայի բռնելու համար դիմը. բայց խեղճ անասնիկը իր բարև-

րարն ճանչնալու կարողութենէ զուրկ ըլլալով, կը փախչէր ինձմէ ցաւած մարմնով. վերջապէս բռնեցի և թողի գնա յազատութիւնս:

Խեղճ թիթեռնիկ. մենք ալ քեզի նման ենք. վիրաւորեալք 'ի պէս պէս ցաւոց և թափառակալք յերկրէ յերկիր. բայց կը գործենք հաւատով յուսոյ և ազօթից թեւերը զոր պարգևած է մեզ Աստուած, որուն լսելով վեցիպէս կ'ողորմի մեզ: Երբ ետևէդ կու գայի բռնելու համար գքեզ, ո'թիթեռնիկ, կը վախնայի ինձմէ. կը կարծէիր թերևս թէ ցաւոցդ վրայ նոր ցաւեր ալ կ'ուզեմ աւելցնել. իսկ ես զքեզ ազատելու համար կու գայի: Կոյն կերպով և Աստուած մեր ետևէն կու գայ: Բայց երբ ձգեցի գքեզ 'ի մթութեան զիւնբի արտաքս քան գտնեակն իմ, անշուշտ ամբաստանեցիր զիս յանգթութիւն. խեղճ թիթեռնիկ այն խոշոր լոյսը որուն կարուստը ցաւ պատճառեց քեզ, չես գիտեր որ մինչև 'ի դրունս մահու հատոց գքեզ. որուն տեղը պիտի ունենաս վաղուան օրը 'ի ծագել ալ քեզական քաղցրաշունչ և ազատ օդ մը. և յայնժամ պիտի օրհնես քու ազատարարդ: Այս մութ գիշերը, ո' ընթերցող, պատկեր է անհրաժեշտ մահուն. և երբ Աստուած առաքէ մեզ զայն' անոր համար որ գտնել տայ մեզ զազատութիւն, զկեանս և զինդութիւն 'ի ծագել յաւերժական լուսոյն: Ահա ասիկա ըսի քեզ, ո' թիթեռնիկ, ահա ասիկա կ'ըսէ մեզ Աստուած, ո' ընթերցող:

Այսատարիւն և երանկոտիւն. — Այլ է գծագրել նկար մը և այլ է նկարել. այլ է յատակագծել տուն մը և այլ է շինել. այլ է ըսել « Այրարից զայս կամ զայն, » և բուն լորովով Այլ կատարել գառաջարկութիւն մը կամ գծեռնարկութիւն:

Գիրին է առաջարկել, այլ դժուարին կատարել կամ 'ի գլուխ տանել: Կրնամք կրակարանի քով նստած, կամ ընկողմանակալ զպարսպարդ բլրոյ մը վրայ գեղեցիկ և հաճոյական երազներ տեսնել. բայց այս երազները մարմնացնելու համար պէտք է աշխատիլ մեծածիղք և խորհիլ անընդհատ, և խորհել մինչև ցլատակել մտաց մեքոց:

Յոյր մեծահոգակ արանց կենաց պատմութիւնը կը հաւաստէ մեզ զայս. բայց բազումք յերիտասարդաց ընդդէմ գառնան այս ճշմարտութեան անհամբեր արհամարտութեամբ:

Կ'ուզեն սերմանել և հնձել միանգամայն: Անհանգստութիւն կ'երևայ իրենց չի կարե-

նալ ժողովել յառաջ քան զայլուն. քրտամբ աշխատիլ յառաջ քան զգտանել զսպարուտ. և տեսնելով այն բարձրութիւններն յորս այլք ելեր են մագլցի, կը մերժեն թէ ըլլայ այնքան դժուարին հասանել կամ ելանել յայն բարձրութիւնս: Այն յաջողութիւնքն զորս այլք մեծաւ աշխատութեամբ և հանձարով ձեռք բերեր են, անկողմ աչաց պարզ ու սովորական բանիւ կ'երևին:

Ինչպիսի գիւրութեամբ չեն սահիր շոգեմուզ կառքերն երկաթուղեաց վրայ, մի թէ անկէց աւելի պարզ, բնական ու դիւրին բան կրնայ ըլլալ: Եւ սակայն, ո՞րն թերցող, արդեօք գիտես թէ որչափ հանձար ու մտածութիւն կենդրոնացած է անդ. ինչպիսի և որչափ աշխատութիւն պէտք եղած է առ ՚ի ձեռս բերել զայն զոր կը տեսնաս:

Աշխարհիս մէջ ամենայն ինչ ասոր նման է. ո՞ր և է բան եթէ մեծ և եթէ փոքր աշխատութեամբ կ'ըլլայ. պէտք է նախ ՚ի գործ զնել ժամանակ, մտածութիւն, ճարտարութիւն, և ապա խոնջեալ ու վաստակեալ սպասել արդեանց: Պէտք չէ փախուտ տալ ո՞ր և է աշխատանքէ, և ոչ տըրտնոյնալ ընդգէժմ ո՞ր և է արգելից արգելչաց ուղղոյն:

Եւ սակայն ինչ են հարստութիւնք և պատիւք, եթէ պակասեցէ մեզ երջանկութիւն: Այն անձն որ կ'աշխատի իրեն յարստութեամբ և ինձակ մը շինելու, միանգամայն պէտք է յիշէ որ աշխարհիս մէջ բաւական չէ հարստութիւն ու պատիւ միայն: Ինչ օգուտ ախորժակամ կերակուրններ և ընտիր ու ազնիւ գինիներէ, եթէ մէկն ախորժակ չունենայ: Ինչ են անգաստունքն ու պալատներն, դաշտերն ու ծառաստաններն, եթէ զանոնք գիտող սպքերն նսեմացեալ են յարստուաց և խոնջեալ ՚ի հոգոց:

Եթէ ոչ Տէր շինեցէ գտուն նոցա, չի նողք նորս ՚ի զուր վաստակեն. եթէ ոչ Տէր պահեցէ գթազարս նոցա, պահապանք նոցա ՚ի զուր ջանքն: Ընդունայն տեղ վաղայարոյց լինին, ընդունայն տեղ երկայնեն զգիշերս, ընդունայն տեղ ուտեն զհաց ցաւոց:

Ուրեմն աշխատութեամբ կ'ապահովենք մեր բախտը, ու սրտի անգորրութեամբ մեր երջանկութիւնը:

Երկու Մկուճք. — Վարսալիրայի մը խանութին մէջ մուկ մը կար որ ամելոյն քարին վրայի աւելցած ձէթն լընլով կ'ապրէր և գոհ էր իր վիճակէն:

Նոյն տեղւոյն մօտ ուտելիաց ամբարանոց մ'ալ կար, ուր ուրիշ մուկ մ'ամեն տեսակ ուտելիաց առատութեան մէջ թաթխուած չալլութեամբ կ'անցունէր իր օրերն:

Ասիկա գնաց օր մը հրաւիրելու իր մերձաորը, որպէս զի մասնակից ըլլայ իր երջանիկ բախտին. բայց միւսն խոհեմութեամբ պատասխանեց.

« Երբոր ամբարանոցին տէրը տեսնելու ըլլայ մեր բրած մեծամեծ վնասները, որոգայթ մը կը լարէ մեզ և չարամակ կը կորուսանէ. իսկ վարսալիրայն ընդ հակառակն հանգիստ կը թողու զիս, վասն զի ըրած կորուստը ոչինչ է: Ուրեմն կ'ախորժիմ աւելի ամելոյ մը քարը լընլ և ննջել անխըռով սրտիւ, քան կեալ առատութեամբ միշտ յերկիւղի:

Չանա կատարելագործելու դճեզ՝ այլ զգուշացիլ յանձնասիրութենէ: Ոչ երբեք մարդուս համար չափազանց կրնայ ըլլալ բարի համբուս սիրելի, բայց չափաւորութիւնն ալ պէտք է ընկերակցի այս բերման: Աղէկ խօսիւնք, աղէկ գրեւք, միայն այլոց համոյ ըլլալու գիտմամբ և իրաւամբ գոհ ըլլալու համար մեղք մեզմէ: Ինչպէս կրնայ աղէկ խօսողն ու գրողն հպարտանալ՝ երբ մտածէ թէ թիւր մարդիկ քաջագոյն են քան զինքը, և թէ իր արգիւնքն երկիւղէն է:

Եթէ ըլլա՞ր քաղոք մը, կ'ըսէ Պոսիւէ. յորում ամենայն մարդիկ բարի ըլլային, ամենքը պիտի գէժ կենային վարել չըլլա՞ւ նոյն ջանքով որով հիմա կը փափաքին ըլլալ: Վասն զի չկայ այնպէս անխելք մէկն որ աւելի չախորժի ճշգրտ իր ամեն պիտոյցն հոգացուիլը քան թէ իրեն գործ բանալ ու այլոց պիտոյցն հոգալը վրան առնուլ:

Մեծամեծ աշխատութեանք կը կատարուին ոչ ուժոյ զօրութեամբ՝ այլ յարատուութեամբ:

Շնորհքը՝ առանց ինչգորուելու ընելու է. ապա թէ ոչ՝ պարտականութիւն կը դառնայ:

Իմաստութեան մասն է նաև գոհ ըլլալն քանի մը բան չգիտնալու: